

զղորա չար հերձուածն իմանաս, զնա եւ տես ի Հայոց հօր փիլիսոսփայի Սիւնեցի Առաքելի զանաութիւնսն, ի բազում տեղիս, թէ որչափ նզովս արձակէ զկնի այնպիսի զաւանդագն: Նախ ի Լուծմունս Սահմանացն Դաւթի ի յայնմ տեղւոջն որ զերկրորդ սահմանսն իմաստասիրութեան բացայայտէ, թէ Իմաստասիրութիւն է զխտութիւն աստուածայնոց եւ մարդկայնոց իրողութեանց: Եւ զարձեալ տես ի Լուծմունս քերականին ի Վանդի եւ ի Փաղառութեանց մեկնութիւնսն:

Եւ թէ ասէք ի բազում տեղիս տեսանեմք զբեալ զայսպիսիս ի գիրս Հայոց եւ ի հին գրեանս, իմացիք. թէպէտ բազում անգամ սրբեցին սուրբ հարքն, ոչ զոյ գիրք Հայոց, որ ոչ երեւի որոմն ինչ ի Քաղկեդոնականացն. զի բազում անգամ Քաղկեդոնականքն իրբեւ զաւճածուկ խառնեալ ի Հայք եւ պղծեալ, երբեմն ի ժամանակս Հերակլայ, որ վեց կաթողիկոսք ՁԴ ամ թիւրեցան: Եւ երբեմն լինէր¹⁴ յաւուրս Լեւոնի ի շխանին Կիւլիկեայ, որ երկոտասան եպիսկոպոսօք զաշնակից կամեցան. յորոց մի էր Ներսէս Լամբրոնացի, կամաքարչեալ եւ ոչ կամաւ, սրպէս հրամայէ Կիրակոս կոչեցեալ պատմագիր¹⁵: Եւ է որ ի ժամանակս ի յաստիճանաւորացն Հայոց՝ որ չեն տունկ երկնաւորին՝ խլեալ ի բաց կորնչին ի գաւթէ սրբոյ Եկե-

¹⁴ Ձ. լինէի:

¹⁵ Կիրակոս Փանձակեցի, Պատմութիւն, էջ 76 (ապ. Վենետիկ):